ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Մեղրյանին և Գոհար Մկրտչյանին Ֆրանսիայի Հանրապետություն (քաղաք՝ Փարիզ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Սերգեյ Մեղրյան, Գոհար Մկրտչյան:

Գործուղված պաշտոնատար անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարող, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Իրավաբանական բաժնի պետ

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (քաղաք՝ Փարիզ) 2022 թվականի նոյեմբերի 23-ից նոյեմբերի 25-ը ներառյալ:

Հրավիրող կողմը՝ Դատական կատարողների միջազգային միություն (այսուհետ՝ Միություն):

Գործուղման նպատակը՝ մասնակցելու՝ Միության Մշտական խորհրդի լիագումար նիստին և Միության 70-ամյակին նվիրված միջոցառումներին:

Քննարկված թեմաներ՝ Թվային կատարողական վարույթ, Թվային արժեքների բռնագանձման վերաբերյալ համընդհանուր կանոնագիրք, Միության տարեկան հաշվետվություններ, Միության գործունեության վերաբերյալ որոշումների ընդունում:

Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստի ժամանակ ներկայացվել և քննարկվել է Թվային արժեքների բռնագանձման վերաբերյալ համընդհանուր նոր օրենսգրքի իրազեկման և կիրարկման հետ կապված հարցերը, որն ուղեցուցային նշանակություն է ունենալու Միության անդամ պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում թվային արժեքների բռնագանձման հնարավորությունները դիտարկելու, համապատասխան օրենսդրական կարգավորումների արդյունքում այդ պետությունների հարկադիր կատարման ոլորտում այն կիրառելու համար: Նիստերի ժամանակ Ս. Մեղրյանը և Գ. Մկրտչյանը մասնակցել են տարբեր քննարկումների, որոնք վերաբերվում էին Միության անդամ պետություններում էլեկտրոնային արդարադատության, մասնավորապես՝ էլեկտրոնային կատարողական վարույթի ներդրման հարցերին: Հարկ է նշել, որ այդ քննարկումները կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Հանրապետությունում հարկադիր կատարման ոլորտում ներկայումս իրականացվող բարեփոխումների առանցքային ուղղություններից՝ հարկադիր կատարման վարույթի ամբողջական թվայնացման և

օրենսդրական դաշտի կատարելագործման գործընթացում: Նիստի ընթացքում անդամ պետությունները ներկայացրել են իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություններ: Ծառայության ներկայացուցիչները մասնակցել են նաև Միության 70-ամյակին նվիրված միջոցառումներին:

Աշխատանքային այցի ընթացքում Ծառայության ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել Դատական կատարողների միջազգային միության նախագահ Մարկ Շմիցի և այլ գործընկեր կառույցների ղեկավարների հետ: Զրուցակիցները քննարկել են երկկողմանի հետագա համագործակցության ուղղությունները, կնքված համագործակցության հուշագրերի համատեքստում փոխգործակցության նոր հնարավորություններն ու զարգացման հեռանկարները:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նիստի ընթացքում Ծառայությունը՝ որպես լիիրավ անդամ, մասնակցել է Միության ընթացիկ գործունեության վերաբերյալ մի շարք որոշումների ընդունման գործընթացին, այդ թվում՝ Միության տարեկան անդամավճարը 15 տոկոսով բարձրացնելու վերաբերյալ որոշման ընդունմանը: Ծառայությունը, ըստ էության, ընդգծելով բարձրացված հարցի արդիականությունը և կարևորությունը, այդուհանդերձ նշել է, որ, որպես պետական մարմին՝ Ծառայության ծախսերը յուրաքանչյուր հաջորդ տարվա համար սահմանվում է օրենքով, իսկ 2023թ. համար արդեն իսկ կազմել է նախահաշիվ, որում այդ գումարը նախատեսված չէ. Ուստիև հաջորդ տարվա համար հավելյալ գումար՝ որպես անդամավճար, վերջինս չի կարող հատկացնել:

Միաժամանակ, Ծառայությունում իրականացվող բարեփոխումներին ծանոթանալու և իրենց խորհրդատվական առաջարկություններով հանդես գալու համար նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Դատական կատարողների միջազգային միության նախագահ Մարկ Շմիցի և Միության առաջին տեղակալի հետ հաջորդ տարի Հայաստանի Հանրապետություն վերջիններիս այցի վերաբերյալ:

Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև Ուզբեկստանի Հանրապետության Դատախազության կազմում գործող հարկադիր կատարման բյուրոյի հետ համագործակցության նոր ուղիների ստեղծման և ընդլայնման շրջանակներում 2023թ. համատեղ հուշագրի ստորագրման վերաբերյալ:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ուզբեկստանի Հանրապետության Դատախազության կազմում գործող հարկադիր կատարման բյուրոյի հետ համագործակցության հուշագրի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելու և այն կազմվելու դեպքում, որոշվել է հուշագիրը և դրա հիման վրա համագործակցության ծրագիրը ստորագրել կամ Բյուրոյի կողմից կազմակերպվող միջազգային կոնֆերանսի կամ Միության հաջորդ կիսամյակային նիստի ընթացքում, որոնք անցկացվելու են 2023թ.:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ ի կատարումն ՀՀ վարչապետի աշխատակազմի թիվ 02/06.12/35136-2021 հանձնարարականի՝ 29.11.2021թ. վերը նշված գործուղման արդյունքների վերաբերյալ կազմակերպվել է աշխատանքային քննարկում ստորաբաժանումների համակարգողների մասնակցությամբ, և գործուղման ժամանակ ստացած տեղեկատվությունը փոխանցվել է վերջիններիս իրենց համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների աշխատակիցներին իրազեկելու համար:

Ստորագրությունը, ամսաթիվը.

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ

ՍԵՐԳԵՅ ՄԵՂՐՅԱՆ

29.11.2022թ.